



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՅ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Բնապահպանությունը որպես մարդկության գլխավոր հիմնախնդիր, կրթությունը և դաստիարակությունը դպրոցում

Առարկան՝ Պատմություն

Հետազոտող ուսուցիչ՝ Գրետա Սարգսյան

Ուսումնական հաստատություն՝ ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի Մ. Մաշտոցի անվան N 1 հիմնական դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	3
1. Բնություն-մարդ փոխարարությունների էվոլյուցիան.....	5
2. Բնապահպանությունը. կրթությունը և դաստիարակությունը դպրոցում.....	9
3. Էկոլոգիան որպես գիտություն.....	12
4. Բնապահպանության գլխավոր հիմնախնդիրները.....	14
5. Էկոլոգիական վարքագծի ձևավորում.....	21
6. Եզրակացություն.....	25
7. Առաջարկություններ.....	26
Գրականության ցանկ.....	28

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ



Հետազոտական աշխատանքի **արդիականությունը**. Ներկայումս մարդկությունն ապրում է իր պատմության ծանր ժամանակաշրջանը: Վտանգի առջև է Երկիր մոլորակի վրա կյանքի գոյությունը, որի պահպանումը հասարակության գլխավոր հիմնախնդիրն է՝ այսօր և մոտ ապագայում: Խնդրի լուծման համար մարդկությունը պետք է միավորի իր ինտելեկտուալ և տնտեսական ջանքերը, մոռանա կրոնական, ազգային և քաղաքական հակամարտությունները [3]:

Բնությունը փոխադարձաբար կապված կենսական և ոչ կենսական բաղադրամասերի բարդ, ամբողջական համակարգ է, որի մի մասն է կազմում հասարակությունը: Վերջինս չի կարող գոյություն ունենալ առանց բնության հետ մշտական կապերի, որտեղից վերցնում է օդ, ջուր, սնունդ, հումք, և այդ պատճառով բնության վրա մարդու փոխակերպիչ ազդեցությունն անխուսափելի է[5]:

Սոցիալական խնդիրների տակ կքաճ հասարակությունը մոռացել է բնության մասին: Մարդիկ թեպետ եւ տեղյակ են, թե ինչ միջավայրում են ապրում, սակայն հետաքրքրված չեն կանխել իրենց իսկ քթի տակ կատարվող անօրինականությունը: Երբեմն գյուղի միջով անցնող գետը դառնում է կոյուղի կամ էլ ամբողջ գյուղն աղբը լցնում է գետը:

Մեր մոլորակն անընդհատ բախվում է տարբեր տեսակի բնապահպանական խնդիրների: Դրանց մեծ մասը գալիս է բնական ռեսուրսների գերշահագործումից այնպիսի արագացված տեմպերով, որ այն չի կարող վերականգնվել նույն

արագությամբ: Այս ամենը ենթադրում է շրջակա միջավայրի դեգրադացիա՝ մարդկանց կողմից չարաշահումների հետևանքով: Մարդկային սպառումը հիմնված է մեր ռեզեներացիոն կարողություններից դուրս ապրանքների ձեռքբերման վրա {6}:

Հասարակության շրջանում բնապահպանական տեղեկատվության հանդեպ ցածր պահանջարկի պատճառը բնապահպանական խնդիրների կարևորության, դրանց հետևանքների վտանգավորության մասին իրազեկվածության անբավարար մակարդակն է:

Ուսումնասիրությունները վկայում են, որ սովորաբար մարդիկ բնապահպանական խնդիրներով հետաքրքրվում են միայն այն ժամանակ, երբ այն վերաճվում է սոցիալական խնդրի, կամ առնչվում է անմիջապես իրենց առօրյա կենսագործունեությանը [7]:

Հետազոտական աշխատանքի *նպատակը* բնապահպանության գլխավոր հիմնախնդիրների ուսումնասիրումն է, կրթության և դաստիարակության ոլորտներում վերջինիս կարևորության մատնանշումն է:

1. ԲՆՈՒԹՅԱՆՈՒՆ-ՄԱՐԴ ՓՈԽՉԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԷՎՈԼՈՒՑԻԱՆ



Ինչպես արդեն նշեցինք բնությունը փոխադարձաբար կապված կենսական և ոչ կենսական բաղադրամասերի բարդ, ամբողջական համակարգ է, որի մի մասն է

կազմում հասարակությունը: Վերջինս չի կարող գոյություն ունենալ առանց բնության հետ մշտական կապերի, որտեղից վերցնում է օդ, ջուր, սնունդ, հումք, և այդ պատճառով բնության վրա մարդու փոխակերպիչ ազդեցությունն անխուսափելի է:

Մարդը, որպես կենսաբանական տեսակ, իր ձևավորման արշալույսին բնության վրա ազդում էր այնպես, ինչպես մյուս կենդանի օրգանիզմները. Նա սնվում էր սերմերով, պտուղներով, ուտելի բույսերով, դեղատու բույսեր էր հավաքում, կենդանիների որս էր կատարում և հաճախ ինքն էր զոհ գնում գիշատիչներին: Մարդու և բնության միջև գոյություն ունեւ ներդաշնակ կապ [5]:

Սակայն հետագայում, երբ սկսեց ձևավորվել մարդկային հասարակությունը, մարդն, ի տարբերություն մյուս կենդանիների, աշխատանքի շնորհիվ դուրս եկավ բնական միջավայրի կենսաբանական հսկողությունից և հնարավորություն ստացավ ընդլայնելու սեփական պահանջմունքների շրջանակը:

Դրանով սկիզբ դրվեց բնության վրա նրա միակողմանի ազդեցության ուժեղացմանը: Անասնապահության զարգացումը բերեց նրան, որ արոտավայրերում անասունների կենտրանացումն ուղեկցվեց բուսականության տիպի փոփոխություններով և բնական ապրելավայրերից վայրի կենդանիների դուրս մղումով [5,6]:

Բնության մեջ անհամեմատ ավելի մեծ անցանկալի փոփոխություններ տեղի ունեցան, երբ մարդը սկսեց զբաղվել **հողագործությամբ**: Մշակովի հողատարածքների ընդլայնման համար հատվեցին ու այրվեցին անտառածածկ տարածքներ, չորային շրջաններում գետերի վրա կառուցվեցին ոռոգման համակարգեր: Այս ամենի հետևանքը դարձավ գետերում ջրի մակարդակի նվազումը, հողերի էրոզիան, ինչն էլ անխուսափելիորեն ազդեց նաև կենդանական աշխարհի վրա. զրկվելով բնական ապրելավայրերից՝ կենդանիների առանձին տեսակների թվաքանակը զգալիորեն կրճատվեց, իսկ որոշ տեսակներ պարզապես անհետացան: Այդ ընթացքում միջատների և կրծողների բազմաթիվ տեսակների համար տեղի ունեցած փոփոխությունները բարենպաստ էին, և դրանք սկսեցին հաջողությամբ բազմանալ ու դառնալ մշակովի բույսերի վնասատու [6]:

Ոչինչ չտալով հողին՝ հողագործը ձգտում էր ստանալ առավելագույն օգուտ, որն էլ բերեց հողերի կառուցվածքի քայքայմանը, դրանց աղքատացմանը և էրոզիայի:

Զանգվածային անտառահատումները փոխեցին հողերի ջրային ռեժիմը, ուժեղացան էրոզիայի գործընթացները, ի հայտ եկան ավերիչ ջրհեղեղներ, ծանծաղեցին գետերը,

գրանցվեց քաղցրահամ ջրի պակաս, իսկ մի շարք տարածաշրջաններում ձևավորվեց չորային կլիմա[5]:

Արդյունաբերության զարգացումը, բացի բնական պաշարների աննախադեպ ծավալներով օգտագործումից, ի հայտ բերեց նոր խնդիր՝ շրջակա միջավայրի աղտոտումը. հողը, մթնոլորտը, ջրավազաններն աղտոտվեցին արդյունաբերական թափոններով: Դրանք ոչ միայն խիստ բացասաբար ազդեցին հողերի բերքատվության, բուսականության, կենդանական աշխարհի վրա, այլև սկսեցին լուրջ վտանգ ներկայացնել մարդու առողջության համար :

Բնության վրա մարդու ազդեցությունը հսկայական չափերի է հասնում հատկապես այսօր, երբ նրա գործունեության շրջանակներում է հայտնվել անգամ Տիեզերքը:

Երկար ժամանակ մարդը բնությանը նայում էր որպես իր համար նյութական բարիքների անսպառ աղբյուրի: Սակայն գնահատելով սեփական տնտեսական գործունեության բացասական հետևանքները՝ նա արդեն գիտակցում է, որ հենց իր շահերից է բխում բնության պահպանությունն ու խելամիտ օգտագործումը, որի հիմքում պետք է ընկած լինեն բնության օրենքների իմացությունը և տնտեսական գործունեության ընթացքում դրանցով առաջնորդվելը [5,7]:

Բնության պահպանությունը գիտականորեն հիմնավորված միջազգային, պետական և հասարակական միջոցառումների համակարգ է, որն ուղղված է բնական պաշարների արդյունավետ օգտագործմանը, վերարտադրմանը, աղտոտումներից և քայքայումից բնական միջավայրի պահպանությանը՝ ելնելով ներկա և ապագա սերունդների շահերից [7]:

Մարդու տնտեսական գործունեությունը պատճառ է դարձել բույսերի և կենդանիների առանձին տեսակների թվաքանակի կրճատման, անգամ որոշ տեսակների անհետացման: Որևէ տեսակի անհետացումն իսկական աղետ է բնության համար, որովհետև բնական բարդ ու ճյուղավորված կապերում յուրաքանչյուր տեսակ իր տեղն ու դերն ունի: Չկան օգտակար և վնասակար տեսակներ: Տեսակին մարդը վնասակար է համարում՝ իր տնտեսությանը հասցրած վնասի պատճառով:



Տեսակի ոչնչացմանը կարող է հանգեցնել չափից ավելի արդյունահանումը: Բնությունից պետք է վերցնել խելամիտ քանակով՝ չգերազանցելով բնական վերարտադրության մակարդակը: Հակառակ դեպքում արդյունահանվող տեսակներին սպառնում է, օրինակ՝ կապույտ կետի, Սևանի իշխանի ճակատագիրը:

Բնական պաշարների օգտագործման նկատմամբ անհրաժեշտ է դրսևորել համալիր մոտեցում: Օրինակ՝ անտառին չի կարելի նայել միայն որպես փայտանյութի ու քիմիական հումքի աղբյուրի և անխնա հատել: Այն նաև թթվածնի, մորթեղենի, պտուղների, մսի, դեղատու և ուտելի բույսերի աղբյուր է, մթնոլորտում եղած ածխաթթու գազը կլանող համակարգ է [5,6]:

Անտառը պետք է հատել միայն առատ և չյուրացված տեղերում: Անտառահատումն արգելվում է գետերի վերին հոսանքներում, խիտ բնակեցված տարածքների շրջակայքում, որտեղ այն ունի կլիման մեղմացնող, առողջապահական, ջրապաշտպան, հողապաշտպան նշանակություն:

Հաճախ առանձին տեսակների պահպանությունը հակասության մեջ է մտնում բնապահպանության հետ, օրինակ՝ որմզդեղենի, որի առանձնյակների չափից ավելի մեծ թվաքանակը շոշափելի վնաս է հասցնում ծառատեսակներին: Ուրեմն՝ անհրաժեշտ է անտառում կարգավորել կենդանու թվաքանակը՝ պահպանելով այդ տեսակին:

Մյուս կողմից, առանձին տեսակների պահպանությունը կայունացնում է էկոհամակարգը: Օրինակ՝ միջատակեր թռչունների, երկկենցաղների, սողունների պահպանությունը նշանակում է նաև անտառի պահպանություն վնասատուներից: Այսպիսով՝ բնապահպանական միջոցառումների կիրառմամբ էկոլոգիական հետազոտությունները հիմք են ծառայում բնության վրա մարդու ազդեցության կարգավորման համար [5,7]:

Այսպիսով՝ բնապահպանական միջոցառումների կիրառմամբ էկոլոգիական հետազոտությունները հիմք են ծառայում բնության վրա մարդու ազդեցության կարգավորման համար:

2. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Այսօր մարդկության ամենամեծ տնտեսական սպառնալիքը բնությունն արժևորելու մեր անկարողությունն է [7]:



<<Էկոլոգիա>> բառն այսօր համընդհանուր ճանաչում է ձեռք բերել, և չկա մի բնագավառ, որտեղ այն չկիրառվի: Այս գիտության մասին 20-րդ դարի սկզբին գիտեին միայն կենսաբանները, իսկ կեսերին, երբ ի հայտ եկան համամոլորակային էկոլոգիական ճգնաժամերը, սկիզբ առավ էկոլոգիական շարժումը, որն ավելի ու ավելի լայն թափ է ձեռք բերում:

Շրջակա միջավայրի հանդեպ սպառողական վերաբերմունքը, գլոբալ էկոլոգիական հիմնախնդիրների՝ կլիմայի փոփոխության, կենսաբազմազանության կորստի, հողերի դեգրադացման և անապատացման, ջրային ռեսուրսների, մթնոլորտային օդի աղտոտման, ընդերքի անխնա շահագործման վերաբերյալ մակերեսային ընկալումը հետևանք են էկոլոգիական գիտելիքների և մշակույթի ցածր մակարդակի կամ բացակայության: Հետևաբար նոր էկոլոգիական մտածելակերպի ձևավորումը, հիմնված բնության և հասարակության համատեղ զարգացման սկզբունքների վրա,

անհնար է առանց համընդհանուր էկոլոգիական կրթության և դաստիարակության [7,8]:

Այժմ «Էկոլոգիա» առարկան մուտք է գործում միջնակարգ ու բարձրագույն դպրոցի հումանիտար և բնագիտական հոսքեր, որովհետև էկոլոգիայի և բնապահպանության հիմունքները պետք է յուրացնի ամեն ոք՝ անկախ իր ձեռք բերած մասնագիտությունից: Էկոլոգիական կրթության հետ մեկտեղ կարևոր ուշադրության է արժանանում էկոլոգիական դաստիարակությունը, որի իրականացմամբ լուծվում են բնության, մշակութային ժառանգության, սոցիալական բարիքների նկատմամբ խնայողական վերաբերմունքի դրսևորման հարցերը [7]:

Այսինքն՝ հնարավոր կլինի փոխել մարդկանց հոգեբանությունը՝ հրաժարվելու բնության նկատմամբ սպառողական վերաբերմունքից, կանխատեսելու շրջակա միջավայրի և մարդու առողջության համար մասնագիտական գործունեության հնարավոր բացասական հետևանքները, համոզվելու գիտականորեն հիմնավորված բնապահպանական միջոցառումների անհրաժեշտության մեջ, սովորեցնելու փոխզիջումների ուղիներ գտնել տնտեսական և էկոլոգիական շահերի միջև, օգնելու հասկանալ առանց կենսոլորտի մարդկության գոյության անհնարիությունը:

Այսինքն՝ այսօր էկոլոգիան դիտարկվում է ոչ միայն որպես գիտության ինքնուրույն բնագավառ. փոխակերպվելով այն զուտ գիտությունից վերածվել է մտածելակերպի, որը կոչված է ներթափանցելու բոլոր գիտությունների, տեխնոլոգիական գործընթացների և մարդու գործունեության ոլորտների մեջ [6,7]:

Էկոլոգիական կրթությունն դպրոցում և ոչ միայն, երեխայի, անհատի կրթության, դաստիարակության և զարգացման անընդմեջ, բազմակողմանի և պարտադիր իրականացվող գործընթաց է՝ նպատակաուղղված շրջակա միջավայրի վերաբերյալ տեսական և գործնական գիտելիքների, հմտությունների, կարողությունների ձեռքբերմանը, ինչպես նաև արժեքային համակարգի և վարքագծի կողմնորոշմանն ու էկոլոգիական մշակույթի ձևավորմանը [8]:

Էկոլոգիական կրթությունը դպրոցում և բուհերում տեսական գիտելիքից ու գիտագործնական ունակություններից զատ, նախ և առաջ, մոտեցում է, փիլիսոփայություն և գործիք՝ մարդու և բնության միջև կապը ընկալելու, հասկանալու, մեկնաբանելու և այդ ամենի հիման վրա շրջակա միջավայրի հանդեպ առանձին

անհատների, մարդկանց խմբերի և ողջ հասարակության վարքագծի նոր մոդելներ մշակելու առումով [9]:

Էկոլոգիական կրթության և դաստիարակության զարգացման ռազմավարությունը դպրոցներում և բուհական հաստատություններում անհրաժեշտությունը և հրատապությունը պայմանավորված է աշխարհում ստեղծված անբարենպաստ էկոլոգիական վիճակով, որի պայմաններում դիտվում է զգալի անհամապատասխանություն տնտեսական աճի և շրջակա միջավայրի որակի միջև, որի պատճառներից մեկը հասարակական էկոլոգիական գիտակցության ու բնապահպանական վարվելաձևի խիստ ցածր մակարդակն է [2]:

Բնական պաշարների աննախադեպ շահագործումը հանգեցրել է բնության քայքայմանը: ***Ներկայումս մարդկության կարևորագույն խնդիրներից մեկը բնության պահպանության, դրա խելամիտ օգտագործման հիմնախնդիրն է, որը պետք է հիմնված լինի էկոլոգիական օրենքների վրա:*** Իսկ դրա իրականացման տեսական հիմքը «Էկոլոգիա» գիտությունն է [8,9]:

«Էկոլոգիա» եզրույթն առաջին անգամ օգտագործեց գերմանացի գիտնական Էռնստ Հեկելը 1866 թվականին: Այս բառն ունի հունական ծագում և բաղկացած է «օյկոս» տուն, կացարան և «լոգոս»՝ ուսմունք բառերից: Էկոլոգիան գիտություն է, որն ուսումնասիրում է օրգանիզմների միմյանց և միջավայրի հետ ունեցած փոխհարաբերությունները:

Այսինքն՝ այս գիտությունն ուսումնասիրում է կենդանիների կապն ինչպես անօրգանական, այնպես էլ օրգանական միջավայրի հետ, դրանց «բարեկամական» և «թշնամական» վերաբերմունքն այն կենդանիների և բույսերի նկատմամբ, որոնց հետ ուղղակի կամ անուղղակի փոխազդում են, այն խճճված փոխհարաբերությունները, որոնց Դարվինն անվանում էր «գոյության պայքար» [5,7]:

Երբեմն «Էկոլոգիա» գիտությունը կապում են միայն ապրելավայրի կամ շրջակա միջավայրի հետ: Նման մոտեցումը ճիշտ կարելի է համարել միայն այն դեպքում, եթե միջավայրը չի դիտվում օրգանիզմներից առանձին ճիշտ այնպես, ինչպես օրգանիզմներին հնարավոր չէ ուսումնասիրել իրենց ապրելավայրերից կտրված [5]:

Ե՞վ միջավայրը, և՞ օրգանիզմները միասնական և գործառութային ամբողջի մասեր են, որը ևս մեկ անգամ հաստատում է, որ Էկոլոգիան գիտություն է օրգանիզմների միմյանց և միջավայրի փոխհարաբերությունների մասին: Նման

երկկողմանի կապի ընդգծումը կարևոր է նրանով, որ հիմնարար այս դրույթն ամբողջությամբ հաշվի չի առնվում, և էկոլոգիան հանգեցվում է միայն միջավայրի կողմից օրգանիզմների վրա թողած ազդեցությանը [7]:

Նման մոտեցման սխալ լինելն ակնհայտ է, քանի որ հենց օրգանիզմներն են ձևավորել ժամանակակից միջավայրը, հենց նրանց է պատկանում առաջնակարգ դերը միջավայրի վրա այն բացասական ազդեցությունների չեզոքացման գործում, որոնք տեղի են ունեցել և այսօր էլ տեղի են ունենում տարբեր պատճառներով [8]:

Դպրոցներում և կրթական այլ հաստատություններում էկոլոգիայի *խնդիրներին* անդրադառնալիս, անհրաժեշտ է նշել հետևյալ կարևորները.

- օրգանիզմների միմյանց և միջավայրի հետ ունեցած փոխհարաբերությունների ուսումնասիրումը, այդ թվում նաև հասարակության և միջավայրի,
- միջավայրի վրա հասարակության ներգործության մասշտաբների և թույլատրելի սահմանների որոշումը,
- բնական պաշարների խելամիտ օգտագործման գիտական հիմունքների մշակումը,
- բնության վրա բացասական ներգործությունների նվազեցման կամ չեզոքացման հնարավորությունները,
- խախտված բնական էկոհամակարգերի վերականգնումը:

3. ԷԿՈԼՈԳԻԱՆ ՈՐՊԵՍ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ռազմավարական առումով էկոլոգիան գիտություն է մարդկության գոյապահպանության և էկոլոգիական ճգնաժամերից դուրս գալու մասին, ճգնաժամեր, որոնք Երկիր մոլորակի սահմաններում ձեռք են բերել կամ ձեռք են բերում համամոլորակային մասշտաբներ:

Բնական երևույթների նկատմամբ ընդհանուր էկոլոգիական մոտեցումներն ու գնահատականները հին պատմություն ունեն: Ըստ էության՝ էկոլոգիական ուղղվածություն են ունեցել առաջին գիտնական-բնագետների աշխատությունները,

որտեղ նրանք կենդանի օրգանիզմների հատկությունների և ապրելավայրերի պայմանների միջև կապ էին տեսնում [7]:

Ամերիկացի էկոլոգ Բ.Կոմոնները հաջող փորձ կատարեց՝ ընդհանրացնելով էկոլոգիան որպես գիտություն 4 օրենքների տեսքով: Դրանք նորություն չեն, սակայն առաջին անգամ ձևակերպվել են շատ պարզ, պատկերավոր կերպով: Մարդու կողմից բնության մեջ այդ օրենքների պահպանումն էկոլոգիապես գրազետ գործունեություն ծավալելու պարտադիր պայման է:

1-ին օրենքն արտացոլում է բնության մեջ բոլոր գործընթացների ու երևույթների համընդհանուր կապը՝ «Ամեն ինչ կապված է իրար հետ»

2-րդ օրենքը հենվում է էներգիայի և նյութի պահպանման դրույթի վրա՝ «Ամեն ինչ պետք է ինչ-որ տեղ գնա» (այսինքն՝ ոչինչ չի անհետանում):

3-րդ օրենքը՝ «Բնությունն ավելի լավ գիտի» կողմնորոշում է բնական գործընթացների հետ փոխհամաձայնեցված գործողությունների, բնության հետ համագործակցության՝ նրան հնազանդեցնելու, մարդու նպատակներին ծառայեցնելու փոխարեն:

4-րդ օրենքը՝ «Ոչինչ ձրի չի տրվում» մարդուն սովորեցնում է, որ բնության մեջ իր յուրաքանչյուր գործողություն անհետք չի անցնում, թվացյալ շահույթը հաճախ վնասի է վերածվում, իսկ բնության պահպանությունը և բնական պաշարների խելամիտ օգտագործումն անիմաստ են՝ առանց որոշակի տնտեսական ծախսերի:

Այսինքն՝ էժան բնօգտագործումից պետք է հրաժարվել. եթե պահանջվող ծախսերն այսօր մենք չկատարենք, ապա բազմաթիվ անգամ մեծ գումարներով դա անելու են մեր հետագա սերունդները[7]:

Այսպիսով այնքան մեծ է բնությունից հասարակության կախվածությունը, որ պետք է գիտակցել տնտեսության վերակառուցման անհրաժեշտությունը՝ էկոլոգիական օրենքներին համապատասխան, իսկ այդ մտածելակերպի հիմքերը անհրաժեշտ է դնել դեռ դպրոցից:

4. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Ներկայումս մարդկությունն ապրում է իր պատմության ծանր ժամանակաշրջանը: Վտանգի առջև է Երկիր մոլորակի վրա կյանքի գոյությունը, որի պահպանումը հասարակության գլխավոր հիմնախնդիրն է՝ այսօր և մոտ ապագայում: Խնդրի լուծման համար մարդկությունը պետք է միավորի իր ինտելեկտուալ և տնտեսական ջանքերը, մոռանա կրոնական, ազգային և քաղաքական հակամարտությունները [3]:

Նախկինում տեխնոլոգիական գործընթացները մշակվում էին՝ առանց անդրադառնալու շրջակա միջավայրի վրա դրանց ազդեցության հարցերին: Եվ բնական էր, որ կարճ ժամանակ անց քայքայման կամ ապակայունացման ենթարկվեցին կենսոլորտային մեխանիզմները, և խախտվեցին էվոլյուցիայի ընթացքում ձևավորված շատ օրինաչափություններ [4]:

Այսօր արդեն հստակ կերպով պարզ է, թե մարդը որքան քիչ բան գիտի այն միջավայրի մասին, որտեղ ապրում է, հատկապես այն ձևավորող և պահպանող օրինաչափությունների մասին:

Բոլոր կենդանի օրգանիզմներից ժամանակակից մարդն ավելի շատ է ձգտում փոխել բնությունը և, որպես կանոն, չի գիտակցում, որ խախտում է բնական գործընթացների մեխանիզմները և չի կարողանում կանխատեսել սեփական գործունեության հետևանքները:

Գիտության և տեխնիկայի զարգացումով մարդկությունը ձեռք բերեց բնության վրա ազդելու հզոր միջոցներ, որոնք նրան թույլ են տալիս ներխուժելու կենսոլորտում տեղի ունեցող բոլոր երևույթների և գործընթացների մեջ: Եվ ինչպես նշում է Վ.Բ.Վերնադսկին՝ մարդը ոչնչացրել է կուսական բնությունը, կենսոլորտ է ներմուծել նախկինում անհայտ քիմիական միացություններ և կյանքի ձևեր՝ կենդանիների ցեղեր, բույսերի սորտեր՝ փոխելով բոլոր երկրաքիմիական գործընթացները [5]:

Մինչև վերջին ժամանակներս կենսոլորտի ինքնակարգավորման բնական մեխանիզմները կարողանում էին չեզոքացնել մարդու գործունեության բացասական հետևանքները, սակայն ժամանակակից փուլում այդ գործունեության մասշտաբներն

այնպիսի չափերի են հասել, որ դրանք արդեն համեմատելի են բնական գործընթացների մասշտաբների հետ:



Վ.Ի.Վերնադսկին նշում է, որ մարդկությունը վերածվել է հզոր երկրաբանական ուժի: Իրոք, այսօր բազմաթիվ են տեխնածին վթարները՝ ԱԷԿ-երում վթարների պատճառով ռադիոակտիվ նյութերի արտահոսք, շրջակա միջավայրում կյանքի համար վտանգավոր աղտոտիչների տարածում և այլն[4]:

Մարդու քայքայիչ գործունեությունն արդեն հաճախ գերազանցում է մարդածին ազդեցությունը չեզոքացնող կենսոլորտի հնարավորությունները, հակասություններ է ծնում բնության և հասարակության միջև: Արդյունքում ծագում են էկոլոգիական և բնապահպանական հիմնախնդիրներ: Վերջիններս համամարդկային են, քանի որ կենսոլորտը չունի պետական սահմաններ: Համամարդկային հիմնահարցերը ծնում են համամարդկային խնդիրներ, որոնցից ամենակարևորը կյանքի պահպանումն է Երկրի վրա [6,8]:

Ավագ դասարաններում, ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատություններում անհրաժեշտ է մատնանշել մարդածին գործոնների ազդեցությունը և շեշտադրել բոլոր ստորև նշված էկոլոգիական գլխավոր հիմնախնդիրներ առկայությունը.

- ◆ մարդածին՝ անտրոպոգեն, գործոնների մեջ է հիմնական յուրահատկությունը և հակաէկոլոգիական բնույթը: Մարդածին գործոնները հիմնականում վնասակար են, և դրանց շարքին են դասվում բոլոր աղտոտիչները: Երկրի ազգաբնակչության թվի աճը և մարդու ավելի ու ավելի ինտենսիվ գործունեությունը հանգեցնում են բնության վրա մարդածին ազդեցության աճին: Տարեկան ընդերքից արդյունահանվում է ավելի քան 100 մլրդ տ

օգտակար հանածո, սինթեզվում են 60 մլն տ արհեստական նյութեր, հողի մեջ է ներմուծվում 500 մլն տ հանքային պարարտանյութ, և ագրոցենոզներում օգտագործվում է 3 մլն տ թունանյութ:

Մարդածին գործոնների ազդեցությունը խիստ բազմազան է, և դրանք բույսերի ու կենդանիների վրա ազդում են ուղղակի և անուղղակի: Առաջինի դեպքում օրգանիզմները պարզապես ոչնչանում են, քանի որ բնությունից վերցվում է այնքան, որը գերազանցում է բնական վերարտադրության մակարդակը: Օրինակ՝ կենդանիների անկանոն և չնորմավորված որսը, առանձին տեսակների հավաքածուներ կազմելը, մոլախոտերի կամ վնասատուների դեմ ոչ խելամիտ և ոչ տարբերակված պայքարը, բնակչության կողմից որպես վտանգավոր կամ վնասակար համարվող բույսերի ու կենդանիների առանձին տեսակների ոչնչացումը և այլն [3,4]:

Անուղղակի ազդեցության դեպքում միջավայրում հայտնվում են զանազան աղտոտիչներ, որոնք փոխում են օրգանիզմների ապրելավայրերը, և դա հանգեցնում է տեսակների վիճակի վատթարացմանը: Նման իրավիճակ ստեղծվում է, երբ միջավայրը ենթարկվում է.

ա/ **ֆիզիկական աղտոտման**, այսինքն՝ փոխվում են միջավայրի ֆիզիկական ցուցանիշները՝ ռելիեֆը, հողի ֆիզիկական հատկությունները, բնական տարածքներում բնակավայրերի, ճանապարհների կառուցման ժամանակ օդի և ջրի աղտոտումը, հողերը վարելը, ճահիճները չորացնելը, գետերի հունի «կարգավորելը» ջրամբարների կառուցելը, պայթեցման աշխատանքները, էլեկտրամագնիսական դաշտը և ճառագայթումը, աղմկային և ջերմային աղտոտումները,

բ/ **քիմիական աղտոտման**, այսինքն՝ ջրոլորտի, մթնոլորտի, հողի աղտոտում արդյունաբերական թափոններով, թունանյութերով, օրգանական և հանքային պարարտանյութերով, նավթամթերքներով, կենցաղային հոսքաջրերով, տրանսպորտային արտանետումներով, հրթիռային վառելանյութով, ադրի և բժշկական թափոնների այրման վտանգավոր նյութերով (դիօքսիներ, ծանր մետաղներ և այլն),

գ/ **կենսաբանական աղտոտման**, որը տեղի է ունենում մարդու գործունեության ընթացքում բնական կենսացենոզների քայքայման, տարածքի համար «օտար» տեսակների ներմուծման, բույսերի և կենդանիների հիվանդությունների հարուցիչների տարածման, առանձին տեսակների թվաքանակի ոչ ցանկալի

բնկումների, բնական էկոհամակարգերում գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների հնարավոր թափանցման, ջրավազանների էվորոֆագման, կենդանիների սննդի պաշարների ոչնչացման դեպքում:

Կենսոլորտի վրա անտրոպոգեն ազդեցության ամենացայտուն դրսևորումը մթնոլորտի աղտոտումն է: Ներկայումս մեծ անհանգստություն են առաջացնում կլիմայի փոփոխությունները՝ կապված ջերմոցային երևույթի հետ [3,4,6]:

Մթնոլորտի վրա մարդու ընդգծված ներգործության սկիզբը դրվեց այն պահից, երբ նա սկսեց ակտիվորեն միջամտել կենսոլորտային գործընթացներին, ներառյալ անտառահատումները և հատկապես անտառների այրելը, հողերի վարն ու ոռոգումը, ճահիճների չորացումը, քաղաքների, արդյունաբերական ձեռնարկությունների կառուցումը և այլն: Մթնոլորտի աղտոտիչներ են շմուլ գազը, ածխաթթու գազը, ծծմբի և ազոտի օքսիդները, քլորի միացությունները, մեթանը, դիօքսիդները, պեստիցիդները, ազբեստը և այլն [6]:

Մթնոլորտի աղտոտման պատճառով համամոլորակային մասշտաբով ի հայտ են եկել հետևյալ *էկոլոգիական հիմնախնդիրները*.

1. *Ջերմոցային երևույթ:*

Ջերմոցային երևույթ՝ ասելով հասկանում են մթնոլորտի երկրամերձ շերտի՝ տրոպոսֆերայի ջերմաստիճանի հնարավոր բարձրացումը՝ ջերմոցային գազերով պայմանավորված ջերմային հավասարակշռության փոփոխման պատճառով:

Ջերմոցային գազեր են ածխաթթու գազը, մեթանը, ազոտի օքսիդները, օզոնը, ֆրեոնը (քլորֆտորածխաջրածիններ) և այլ գազեր, որոնց թիվը մոտ 30 է: Գլխավորներն են ածխաթթու գազը (առաջանում է էներգակիրների այրման ժամանակ), մեթանը (առաջանում է մեռած օրգանական նյութի քայքայումից) և ջրային գոլորշիները: Ջերմոցային երևույթի մեխանիզմը ներկայացնենք ածխաթթու գազի օրինակով:

Արեգակի տեսանելի ճառագայթները Երկրի մակերևույթ են հասնում ջերմոցային գազերի շնորհիվ և հանդիպելով տարբեր մարմինների^a վերածվում երկարալիք ջերմային (ինֆրակարմիր) ճառագայթների: Դրանց որոշ մասը կլանվում է հողի, ջրի կողմից, մոտ 1%-ը բույսերն օգտագործում են ֆոտոսինթեզ կատարելիս, մնացածը Երկրի մակերևույթից անդրադառնում է [4,6,7]:

Եթե ներքնոլորտում ածխաթթու գազի պարունակությունը նորմայի սահմաններում է՝ 0,03%, ապա անդրադարձած ճառագայթներն առանց արգելքի

անցնում են ներքնոլորտով, ստրատոսֆերայով, մթնոլորտի մյուս շերտերով և ցրվում Տիեզերքում: Այսօր ներքնոլորտում ածխաթթու գազի պարունակությունը 0,037% է: CO₂ -ի այդ ավելցուկը, մյուս ջերմոցային գազերի հետ մեկտեղ, խոչընդոտում է անդրադարձած ջերմային ճառագայթների ներքնոլորտից դուրս գալուն, որտեղ մնում է դրանց պարունակած էներգիան և պայմանավորում օդի ջերմաստիճանի բարձրացումը, այսինքն՝ ջերմոցային երևույթի առաջացումը:

Կանխատեսվում է, որ կլիմայի տաքացման հետևանքը կլինի հավերժական սառույցների հալվելը և Համաշխարհային օվկիանոսի մակարդակի բարձրացումը (վերջին հարյուրամյակի ընթացքում այն արդեն բարձրացել է 10-12 սմ-ով): 21-րդ դարի կեսերին այդ ցուցանիշը կկազմի 50-100, իսկ դարեվերջին՝ մինչև 200 սմ [4,7]:

Կլիմայի տաքացումն ու օվկիանոսի մակարդակի բարձրացումը գնահատվում է որպես աննախադեպ մասշտաբի էկոլոգիական վտանգ:

2. Օզոնի շերտի քայքայումը կամ օզոնային անցքերի առաջացումը:

Մարդու գործունեության հետևանքով օզոնի քանակի նվազումն ազդում է մարդկանց առողջության և Երկրի կլիմայի վրա: Այսպես՝ ամերիկյան գիտնականները գտնում են, որ է 1%-ով օզոնի պարունակության նվազումը հանգեցնում է 2%-ով ուլտրամանուշակագույն ճառագայթման ուժեղացման և 2,5%-ով մաշկի քաղցկեղով հիվանդացության ավելացման: Մելանոմով հիվանդացողների թիվը տարեկան կարող է հասնել 30 հազարի: Կհաճախանան նաև աչքերի կատարակտով հիվանդացության դեպքերը: Կնվազի սննդային կուլտուրաների՝ եգիպտացորենի, բրնձի, սոյայի, ցորենի բերքատվությունը:

3 Թթվային անձրևներ:

Այս էկոլոգիական **հիմնախնդիրը** մթնոլորտի աղտոտման այլ տեսակ է, որը պետությունների սահմաններ չի ճանաչում: Մի շարք երկրներում (սկզբում Սկանդինավիայում, հետո ԱՄՆ-ում, Կանադայում, Հյուսիսային Եվրոպայում, Ճապոնիայում և այլուր) գիտնականները հայտնաբերեցին, որ բնության մեջ ամենամաքուրը համարվող անձրևային ջուրը պարունակում է բավական մեծ քանակով թթուներ: Դրա պատճառը դեպի մթնոլորտ արտանետվող ծծմբի և ազոտի օքսիդներն են [4]:

Ծծմբի և ազոտի օքսիդները մթնոլորտում հայտնվում են հանաձո վառելանյութերի այրման ժամանակ առաջին տեղում քարածուխն է՝ 90%, երկրորդում՝ նավթը, իսկ

գազը զգալիորեն զիջում է դրանց: Ազոտիօքսիդները (NO_x) հիմնականում առաջանում են ավտոմոբիլային տրանսպորտի աշխատանքի ընթացքում: Քարածխի և նավթի այրման ժամանակ առաջացող ծծմբի և ազոտի օքսիդները փոխազդում են ջրային գոլորշիների հետ և առաջացնում ծծմբական և ազոտական թթուներ: Ջրային էկոհամակարգերում թթվային տեղումները բարձրացնում են ջրի թթվայնությունը և կոշտությունը: Ջրային կենդանիները, հատկապես աճող և զարգացող օրգանիզմները, ի տարբերություն հասուն առանձնյակների, խիստ զգայուն են նման անցանկալի փոփոխությունների նկատմամբ: Մատղաշների օրգանիզմում խախտվում է ֆերմենտների, հորմոնների և կենսաբանորեն ակտիվ մի շարք նյութերի գործունեությունը: Արդյունքում՝ օրգանիզմները ոչնչանում են՝ չկարողանալով բազմանալ: Ներկայումս Երկրի հագարավոր լճեր զրկվել են իրենց բնակիչներից, օրինակ՝ Կանադայի, Նորվեգիայի, Շվեդիայի գետերի ու լճերի 20%-ը [4,6]:

Թթվային անձրևներն անդառնալի վնաս են հասցնում նաև անտառներին: Դրանց ազդեցությամբ բույսերից հեռանում են սպիտակուցները, ամինաթթուները, կալցիումը, մագնեզիումը, կալիումը: Վնասվում են նաև պաշտպանական ծածկույթները, որի հետևանքով հեշտությամբ բույսի մեջ են թափանցում սնկերն ու բակտերիաները: Նման բուսական էկոհամակարգերում դիտվում է վնասակար միջատների թվաքանակի բռնկում: Վերջնական արդյունքում կտրուկ նվազում է բուսական համակեցությունների արդյունավետությունը: Հաճախ դրանք զանգվածաբար ոչնչանում են:

Թթվային անձրևները կարող են առաջանալ մի երկրի մթնոլորտում, որտեղից քամիները թթուներ պարունակող ամպերը կտեղափոխեն մեկ այլ երկրի մթնոլորտային տարածք, որտեղ էլ կտեղան այդ վտանգավոր անձրևները: Սա նշանակում է, որ մթնոլորտն աղտոտումներից պաշտպանելու հարցում պետք է շահագրգռված լինեն բոլոր երկրները [4,7]:

4. Ծխամշուշ:

Վտանգավոր երևույթ է և առաջանում է տարբեր աղտոտիչների միաժամանակյա ազդեցության պատճառով: Ծխամշուշն իրենից ներկայացնում է ծխի, մրի, մառախուղի և քիմիական աղտոտիչների (նախ և առաջ, ծծմբական անհիդրիդի և ածխածնի օքսիդի) խառնուրդ: Այն առաջանում է մթնոլորտի 0 օ C-ին մոտ ջերմաստիճանի պայմաններում, երբ քամիների բացակայում են: Նման դեպքում հնարավոր է դառնում,

այսպես կոչված, ջերմաստիճանային շրջադասությունը՝ ինվերսիան. Մթնոլորտի երկրամերձ շերտում կուտակվում է օդի սառը շերտը, որը վերևից ծածկվում է ավելի տաք շերտով: Դա առաջացնում է կանգային երևույթներ, քանի որ օդի հորիզոնական և ուղղահայաց տեղաշարժերը գրեթե բացակայում են (սովորական, ոչ ինվերսիոն եղանակի դեպքում երկրի մակերևույթից և այլ օբյեկտներից տաքացող օդը բարձրանում է մթնոլորտի վերին շերտերը, և դրա տեղը գրավում է ներքև իջնող ավելի սառը օդը, ինչն էլ բացառում է կանգային երևույթների առաջացումը):

Ծխամշուշի դեպքում մթնոլորտի երկրամերձ շերտում վնասակար նյութերի պարունակությունը մարդու առողջության համար կարող է հասնել վտանգավոր չափերի: Նման պայմաններում վնասվում են շնչառության օրգանները, խախտվում է արյան շրջանառությունը, գրանցվում են նաև մահացության դեպքեր, հատկապես մանկահասակ երեխաների, տարեց մարդկանց և քրոնիկական հիվանդություններով տառապողների շրջանում:

Հարկ է ընդգծել, որ համաշխարհային մակարդակով բոլոր երկրները վերջապես պետք է պայմանավորվեն դեպի մթնոլորտ ջերմոցային գազերի, ծծմբի ու ազոտի օքսիդների արտանետումները նվազեցնելու, քլորֆտորածխաջրածինների օգտագործումը դադարեցնելու ուղղությամբ [4,6,7]:

Այսպիսով էկոլոգիական խնդիրների առաջացման գործում մարդածին գործոնների ազդեցությունը շատ մեծ է, ուստի էկոլոգիական կրթության և դաստիարակության մեջ շատ կարևոր է մարդածին գործոնների շեշտադրումը:

Բայց ինչ կարող է անել յուրաքանչյուր մարդ մթնոլորտի աղտոտումը և օզոնի էկրանի քայքայումը նվազեցնելու, համամոլորակային մասշտաբով կլիմայի անցանկալի փոփոխությունները դանդաղեցնելու և ֆինանսական միջոցները խնայելու համար:

- ◆ Նախ և առաջ, անհրաժեշտ է բարձրացնել էներգիայի օգտագործման արդյունավետությունը, օգտվել այն ավտոմեքենաներից, որոնք քիչ բենզին են ծախսում (15 կմ-ի համար՝ 1լ),
- ◆ ավելի շատ քայլել ոտքով,
- ◆ հեծանիվ վարել,
- ◆ շիկացման լամպերը փոխարինել լյումինեսցենտային լամպերով,
- ◆ գնել էլեկտրաէներգիան և ջուրը խնայողաբար ծախսող կենցաղային տեխնիկա,
- ◆ որպես երկրորդային հումք հանձնել թերթերը, ամսագրերը, մետաղները,

- ◆ ծառեր տնկել,
- ◆ խուսափել գնել ՔՏԱ պարունակող արտադրանք...

Ցանկացած պաշարների օգտագործման նկատմամբ մարդու հոգեբանության փոփոխությունը մեր ժամանակի ամենակարևոր էկոլոգիական, քաղաքական, տնտեսական և էթիկական պահանջներից է, որով հնարավոր կլինի կանխարգելել կլիմայի անցանկալի փոփոխությունները, և մարդու համար ապահովել առողջ ապրելավայր:

5. ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԾԻ ՁԵԻԱՎՈՐՈՒՄ

Բնությունը ավագ դպրոցական տարիքի երեխաների դաստիարակության և զարգացման կարևորագույն միջոցն է: Շփվելով բնության հետ երեխան անում է բազմաթիվ բացահայտումներ: Երեխայի համար հատուկ նշանակություն ունի մեծահասակի դերը, երբ նա շփվում է բնության հետ, ում հետ միասին տեղի է ունենում երեխայի ճանաչումը շրջապատող միջավայրին: Նրա մեջ ձևավորվում է բնության մասին սկզբնական կոնկրետ և պայծառ պատկերացումները, որոնք հետագայում օգնում են նրան տեսնել և հասկանալ բնության երևույթների կապը և հարաբերությունը, յուրացնում է նոր հասկացություններ: Երեխայի անհատականության ձևավորման վրա դրական ազդեցություն ունի բնության մեջ աշխատանքը ձևավորմամբ [1]:

Իմանալով բույսերի և կենդանիների մասին մանրամասներ և անհրաժեշտ է երեխայի մոտ ձևավորել և խրախուսել հոգատար վերաբերմունք կենդանի օրգանիզմների հանդեպ, դրա հետ կապված երեխան կձգտի տիրապետել կենդանիների և բույսերի մասին խնամքի տարբեր միջոցներին: Հենց այս աշխատանքն է տալիս երեխային զգալի և նշանակալի արդյունքներ: Խնամելով բույսեր և կենդանիներ երեխան բնության հանդեպ ցուցաբերում է հոգատարություն:

Բնության մասին գիտելիքները խրախուսում են երեխաներին ուշադիր լինել դրա նկատմամբ: Բարի գործերն ու արարքները ամրապնդվում են այն դեպքում, երբ գիտակցում են բնության պաշտպանության անհրաժեշտությունը: Սակայն ուշադիր վերաբերմունքը բնության հանդեպ անհնար է ձևավորել միայն գիտելիքների վրա

հենվելով: Բնության մեջ աշխատանքը համարվում է ակտիվ աշխատանքը բնության մեջ, որը հիմք է ստեղծում բնության նկատմամբ սիրո համար [1]:

Բնության մեջ երեխաների աշխատանքը տալիս է հսկայական արդյունք: Դրանով էլ այն գրավում է երեխաներին, առաջացնում է ուրախություն և բույսեր ու կենդանիներ խնամելու ցանկություն: Երեխաների մոտ բնության հանդեպ սեր: ձևավորելու խնդիրը բխում է դաստիարակության մարդասիրական ուղղվածությունից և բնության պաշտպանության անհրաժեշտությունից:

Բնության հանդեպ հոգատար վերաբերմունքը ենթադրում է բարի գործերի և արարքների հայտնվելը այն դեպքում, երբ դա անհրաժեշտ է, իսկ դրա համար երեխաները պետք է իմանան, թե ինչպես խնամել ծաղիկները, բույսերը և կենդանիները և ինչպիսի պայմաններ ստեղծել դրանց բարենպաստ աճի և զարգացման համար: Բնության նկատմամբ հոգատար վերաբերմունքի ձևավորման համար հատուկ նշանակություն ունի կենդանի օրգանիզմի մասին գիտելիքները, անկենդան բնության օբյեկտներից տարբերակելու կարողությունը [1,2]:

Անհրաժեշտ է ձգտել նրան, որ ավագ խմբի դպրոցականը անտարբեր չանցնի այս կամ այն բնության երևույթի կողքով, որն առաջացնում է տազնապ, որպեսզի նա հետագայում ցուցաբերի խնամք բնության հանդեպ:

Շրջապատող միջավայրի հանդեպ հոգատար վերաբերմունքը կախված է նաև.

- Էսթետիկ ընկալելու ունակությունից, այսինքն, կարողանալ տեսնել բնության գեղեցկությունը:
- Էսթետիկ ընկալումը ապահովվում է բնության հետ երեխաների անմիջական «կենդանի» շփումը:

Այս բոլոր թվարկված խնդիրները, որոնք կանգնած են ուսուցիչների առջև, սերտ փոխկապակցված են՝ անհրաժեշտ է վերանայել և լուծել դրանք համակարգված: Այս խնդիրների բարդությունն ու բազմազանությունը պահանջում են ուսուցչից երեխաների հետ աշխատելու տարբեր մեթոդների օգտագործման կարողություններ (դիտարկում, աշխատանք, ընթերցանություն և պատմել, փորձերի կազմակերպում, գրույց և այլն) [2]:

Մի շարք աշխատություններում անընդմեջ էկոլոգիական կրթության համակարգի առաջին աստիճան է դիտարկվում կրտսեր դպրոցը: Գոյություն ունեցող ծրագրերում դպրոցական տարիքի երեխաներին շրջապատող աշխարհի հետ

ծանոթացնելու համար բավականին մեծ ուշադրություն է դարձվում բնության հետ նրանց ծանոթացման հարցերին: Այդ պատճառով էլ արդեն 5 տարեկան երեխայի մեջ ձևավորվում են մի շարք պատկերացումներ շրջակա միջավայրի, նրա նկատմամբ վերաբերմունքի մասին, որոնք ավագ տարիքում կարող են հիմք հանդիսանալ էկոլոգիական կրթության համար [1]:

Հանրակրթական դպրոցում ուսումնասիրվող բնագիտական դասընթացներն օբյեկտիվ հնարավորություն են ստեղծում սովորողների էկոլոգիական մշակույթի ձևավորման համար: *Դպրոցականների էկոլոգիական մշակույթի ձևավորման գործում էապես կարևորվում է «Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված դասընթացի դերն ու նշանակությունը, քանի որ ժամանակակից մարդուն կենսականորեն անհրաժեշտ է ոչ միայն գիտելիքներ ունենալ մաթեմատիկայի, ֆիզիկայի, պատմության և այլ բնագավառների վերաբերյալ, այլև գիտակցել էկոլոգիական գիտելիքների, էկոհամակարգերի և մարդու ներդաշնակ գործունեության անհրաժեշտությունը համամոլորակային էկոլոգիական ճգնաժամերը կանխելու գործում: Երեխան որքան շուտ ծանոթանա էկոլոգիական հիմնական հասկացություններին, գաղափարներին, այնքան ճիշտ կձևավորվի նրա հարաբերությունները շրջակա բնական և հասարակական միջավայրի հետ[2]:*

Տարրական դասարաններում էկոլոգիական կրթության *խնդիրներն են.*

1. Կրթության ոլորտում՝ սովորողների ծանոթացում էկոլոգիական գիտելիքների հիմունքներին,

էկոլոգիական սկզբնական հասկացությունների յուրացում:

- ◆ Ուսուցման գործընթացի իրականացման ռազմավարության որոշում և կրթության այդ աստիճանում էկոլոգիական կրթության ու դաստիարակության հնարավորությունների բացահայտում:
 - ◆ Էկոլոգիական կրթության բովանդակության իրականացման համար կրթական բարենպաստ միջավայրի և պայմանների ստեղծում, տեխնոլոգիական հազեցվածության, անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի ապահովում, փոխգործակցող սուբյեկտների գործունեության համար փոխգործակցության վերահսկման և գնահատման չափանիշների որոշումը:
2. Դրդապատճառային ոլորտում՝ էկոլոգիական բովանդակությամբ առարկաների նկատմամբ սովորողների հետաքրքրության,

պահանջումները բավարարում, էկոլոգիական գիտելիքների համակարգի ձևավորում:

Էկոլոգիական կրթության կարևորագույն *սկզբունքներն են.*

1. *Հաջորդականության*՝ բնության, աշխարհի, մարդու, էկոլոգիական պարզագույն հասկացությունների վերաբերյալ գիտելիքներից անցում դեպի ավելի բարդ ու համապարփակը:

2. *Ինտեգրացիան*՝ էկոլոգիական տարրական, պարզագույն գիտելիքների համադրում այլ բնագավառների գիտելիքներին (մաթեմատիկա, կերպարվեստ և այլն):

3. *Անընդհատության*՝ էկոլոգիական կրթության իրականացում կրթության բոլոր մակարդակներում՝ նախադպրոցականից մինչև բարձրագույն կրթություն: Էկոլոգիական գործընթացը կարող է ներառել հենքային դասընթացը, նախասիրական, արտասուսումնական պարապմունքները և այլն[1,2]:

Այսպիսով էկոլոգիական կրթության և դաստիարակության մեջ շատ կարևոր է մարդածին գործոնների շեշտադրումը, բնության նկատմամ սիրո և հոգատար վերաբերմունքի ձևավորումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Երկրի վրա կյանքի զարգացման տրամաբանությունը որոշվում է մարդկային գործունեությամբ՝ որպես հիմնական գործոն, և կենսոլորտը կարող է գոյություն ունենալ առանց մարդու, բայց մարդը չի կարող գոյություն ունենալ առանց կենսոլորտի: Մարդու և բնության ներդաշնակության պահպանումը ներկայիս սերնդի առաջ ծառայած գլխավոր խնդիրն է: Սա պահանջում է սպառողական հատկությունների համադրելիության մասին նախկինում գոյություն ունեցող բազմաթիվ գաղափարների փոփոխություն: Յուրաքանչյուր մարդու համար անհրաժեշտ է «բնապահպանական գիտակցության» զարգացումը, որը որոշում է տեխնոլոգիական տարբերակների ընտրությունը, հավելվածների ստեղծումը և բնական ռեսուրսների օգտագործումը:

Ժամանակակից կրթության հիմնական խնդիրներից է էկոլոգիական մտածելակերպի ձևավորումը:

Կարևոր կետ է այն փաստը, որ բնապահպանական կրթության առաջնահերթությունը, բոլոր ուսումնական հաստատություններում բնապահպանական առարկաների պարտադիր ներդրումը ամրագրված են Հայաստանի Հանրապետության «Կրթության մասին» և «Շրջակա միջավայրի պահպանության մասին» օրենքներում: ***«Վերցրու ամեն ինչ բնությունից» կարգախոսից անհրաժեշտ է անցում կատարել «Բնությունը մեր տունն է» կարգախոսին:***

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Նախ և առաջ, անհրաժեշտ է բարձրացնել էներգիայի օգտագործման արդյունավետությունը, օգտվել այն ավտոմեքենաներից, որոնք քիչ բենզին են ծախսում (15 կմ-ի համար՝ 1լ), ավելի շատ քայլել ոտքով, հեծանիվ վարել, շիկացման լամպերը փոխարինել լյումինեսցենսային լամպերով, գնել էլեկտրաէներգիան և ջուրը խնայողաբար ծախսող կենցաղային տեխնիկա, որպես երկրորդային հումք հանձնել թերթերը, ամսագրերը, մետաղները, ծառեր տնկել, խուսափել գնել ՔՖԱ պարունակող արտադրանք... Ցանկացած պաշարների օգտագործման նկատմամբ մարդու հոգեբանության փոփոխությունը մեր ժամանակի ամենակարևոր էկոլոգիական, քաղաքական, տնտեսական և էթիկական պահանջներից է, որով հնարավոր կլինի կանխարգելել կլիմայի անցանկալի փոփոխությունները, և մարդու համար ապահովել առողջ ապրելավայր:
- Մշակել ռազմավարություն կրթության և շրջակա միջավայրի պահպանման ոլորտի շահառուների լայն ներգրավմամբ և աջակցությամբ, այդ թվում՝ պետական և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, ուսումնական հաստատությունների, ինչպես նաև կրթության և շրջակա միջավայրի պահպանման ոլորտում ծրագրեր ֆինանսավորող պետական, հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ: Ռազմավարությունը պահանջում է բոլոր շահագրգիռ մարմինների և քաղաքացիական հասարակության կողմից ակտիվ մասնակցություն:
- նախնական և միջին մասնագիտական կրթության բնագավառները համալրել կայուն զարգացման սկզբունքների վրա հիմնված էկոլոգիական կրթության թեմատիկ դասընթացներով և արհեստավարժ ուսուցիչներով,
- Բարձրագույն և հետբուհական կրթության մեջ իրականացնել բնապահպանությանը վերաբերող կարևորագույն խնդիրների լուծման բաղադրիչների ներդրում

- Իրականացնել բնապահպանական խնդիրների վերաբերյալ հանրային իրազեկման մակարդակի բարձրացման քաղաքականության կատարելագործում

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ասատրյան Լ. Կարապետյան Ն., <<Ես և շրջակա աշխարհը>>, ինտեգրված դասընթացի դասավանդման մեթոդիկա, Երևան 2016թ.
2. Ասատրյան Լ.Թ., Էկոլոգիական կրթության կառավարման հիմունքներ, Եր.ԱՐՏԱԳԵՐՍ, 2009, էջ 147-181:
3. Գրիգորյան Կ.Վ. և ուրիշներ, Բնապահպանություն և աստվածաբանություն, Վաղարշապատ, 2007թ., էջ 9-13
4. Գրիգորյան Կ.Վ. և ուրիշներ, Էկոլոգիայի և բնության պահպանության հիմունքներ, Ե., 2010, էջ 6-11
5. Հայրապետյան Է.Ս., Հարությունյան Լ.Վ., Բնության պահպանության հիմունքներ, Ե., 1983, էջ 21-31
6. Մելքումյան Լ.Ս., Գալստյան Ս.Հ., Բնապահպանության հիմունքներ, Ե., 2010թ., էջ 8-11, 16-22
7. Воронков Н.А., Общая, крикладная и социальная экология, М., 2000г.,стр. 131-140 , 159-163
8. Воронков Н.А., Основы общей экологии, М., 1999г.
<http://www.irtek.am/views/act.aspx?aid=93900>